

նուիրակներէն յանուանէ կը յիշուին Փիլիպպոս վարդապետ, որ «գնաց ի նուիրակութիւն յԱրզրուժ եւ ի Բաղէշ եւ ի Վան» (Դաւր. 240) եւ Խաչատուր վ. Կեսարացի, որ շրջեցաւ Փոքր Ասիա, Կ. Պոլիս, Բալիան եւ հասաւ մինչեւ Լեհաստան :

27. ԱՐԳԵԼԱՐԱՆ

Երբ կը հիմնէր Մովսէս կաթողիկոս վանքեր եւ դպրատուններ, իր գլխաւոր նպատակն էր պատրաստել Եկեղեցւոյ համար հոգելից եւ լուսամիտ առաջնորդներ եւ պաշտօնեաներ : Բայց կային հրապարակի վրայ անթիւ եպիսկոպոսներ, վարդապետներ եւ երէցներ, որոնք ձեռնադրուած նախորդ կաթողիկոսներէն սիմոնականութեամբ, գրաւած էին քաղաքներու եւ գիւղերու մէջ աթոռներ, եւ դարձեալ կը վխտային մէջտեղ բազմաթիւ վանականներ, որոնք հեռացած վանքերէ կը պարապէին վաճառականական գործերով եւ կալուածատիրական ձգտումներով : Կը վկայէր այս մասին ականատես մը, Գրիգոր Դարանաղցի (էջ 284) թէ Դաւիթ եւ Մելքիսեդեկ կաթողիկոսները «միաբանուց արեղայք չթողին, զամէնքն եպիսկոպոս առնէին եւ լցաւ ամենայն երկիր սուտ եպիսկոպոս անունօք» . եւ դարձեալ թէ «վանօրէից արեղայքն, որ ամէնքն առ հասարակ սուտ եպիսկոպոսք էին եղեալ վասն միմեանց նախանձու եւ ոչ վասն այլ իրիք... եւ թողեալ էին